ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժին

ք. Երևան,0078, Հալաբյան 41ա, հեռ.060713456

Ելք N 0018016307, 17 ապրիլի 2024 թ.
Սաթենիկ Արմենի Տոնոյան
Ք. Երևան, Նոր Նորք, Նոր Նորք 8 Զնգվ., 21 Շ., Բն. 13

«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ք. Երևան, Կենտրոն, համ. Կենտրոն, Նալբանդյան փող., 26 շ.

ՈՐՈՇՈՒՄ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

17 ապրիլի 2024 թ. **ք. Երևան**

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժին, ավագ հարկադիր կատարող արդարադատության ավ. լեյտենանտ Նարեկ Մանուչարյանս ուսումնասիրելով թիվ **11152601** կատարողական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից **15 սեպտեմբերի 2023 թ.** տրված թիվ **ԵԴ/29435/02/18** կատարողական թերթի համաձայն պետք է՝

Սաթենիկ Արմենի Տոնոյանից «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ -ի օգտին բռնագանձել 119.965 ՀՀ Դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Կատարողական գործողությունների ընթացքում ՝ 06.03.2024թ. կայացված որոշմամբ նշանակվել է փորձագետ՝ գրավադրված իրերի ներկայիս շուկայական արժեքը պարզելու համար:
«Արմէքսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ներկայացվել եզրակացություն, որի համաձայն Սաթենիկ Արմենի Տոնոյանին պատկանող և «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունում գրավադրված ոսկյա իրերի ընդհանուր շուկայական արժեքը՝ 19.03.2024թ. գնման օրվա դրությամբ կազմում է 162.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43, 67 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մաս, 35.1, 35.2, 35.3, 35.4 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Պարտապան Սաթենիկ Արմենի Տոնոյանին պատկանող և գրավի առարկա հանդիսացող ներքոհիշյալ իրերը

Գույքի անվանումը և նկարագիրը՝ թևնոց/ *5 գր/ հարգ 585*

Գնահատման գինը՝ 81.000 ՀՀ դրամ

Մեկնարկային գինը՝ 60.750 ՀՀ դրամ

Գույքի քանակը՝ 1հատ

<b

>

Գույքի անվանումը և նկարագիրը՝ մատանի */ 3.9 գր/ հարգ 750*

Գնահատման գինը՝ 81.000 ՀՀ դրամ

Մեկնարկային գինը՝ 60.750 ՀՀ դրամ

Գույքի քանակը՝ 1հատ

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ www.ajurd.am միջոցով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը սահմանել՝ 27.05.2024թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասին համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը:

Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ավագ հարկադիր կատարող՝ Ն. Մանուչարյան

ստորագրություն՝